ասող ու անող եմ: (Նայելով վայր թափուած ճանճերին) Հը, քանի՞սն են: Մեկ, երկու, երեք, չորս, հինգ: (Ծուլանալով) Դե, էն է հազար ասա, պրծի: (Գոռում է) Քաջ Նազա՛րն եմ, մին զարկեմ, կջարդեմ հազա՛ր;

ՄԻ ՑՆԴԱԾ ՏԻՐԱՑՈՒ.– (Նիհար, գիսախռիւ, մագաղաթէ գիրքը կռան տակին ներս է ընկնում:)

ՆԱԶԱՐ.– Ո՞վ է՛ (Վեր է թռչում) Հա՛, տիրացուն…

ՏԻՐԱՑՈՒ.– (Զոյգ ոտքով տեղում տրտինգ տալով) Թալեմ բռնեմ, բռնեմ թալեմ: (Նկատելով Նազարին:)

Բարեողջոյն, եղբայր Նազար,
Այդ ի՞նչ այդպէս ջարդես հազար:

ՆԱԶԱՐ.– Ի՛հ՛հ՛… աշխարհքը, ալարում եմ, թէ վեր կենամ ջարդեմ:

ՏԻՐԱՑՈՒ.– Ժամանակի՛ նշան է:

ՆԱԶԱՐ.– Բայց մտքումս դրել եմ, պիտի աշխարհքը ջնջեմ, ճանճերից եմ սկսել:

ՏԻՐԱՑՈՒ.– Ժամանակի նշան է,

ՆԱԶԱՐ.– Ահա, տես, մեկ զարկեցի, ջարդեցի հազար:

ՏԻՐԱՑՈՒ.– Ժամանակի՛ նշան է: (Դիտելով ճանճերին) Ո՛վ Նազարէ, այս ճանճերը ճանճեր չեն, այլ դիւցազններ: (Ոգեւորուած եւ հետզհետէ արագ ու մեքենայական) Դիւցազն մի ահաւոր տեսա երազիս, աջին սուր, ձախին դրօշ: Յայտնուեցաւ իբրեւ հուր երկնային եւ ջարդեց հազար դիւցազն: Ողորմութեամբ աստուծոյ, դու ես այդ դիւցազնը: Ո՛վ կատարումն երազիս: Դու կտիրես աշխարհին, Նազա՛րիաս, եւ թագաւորք կդողան քեզնից: (Բաց է անում գիրքը եւ բակի մէջ շրջան գործելով՝ սկսում է նայել գրքին ու փնթփնթալ) Ահա՝ եկի, գտա, տեսի եւ ստուգեցի Տիրոջն օգնականութեամբ: Օրն է մեծ, երազն ի բարին: Որ ե՛ւ ստուգեմ, ե՛ւ գուշակեմ, եւ մեկնեմ: Ահաւասիկ (Համրում է ճանճերը), մեկ, երկու, երեք, չորս, հինգ, այսինքն՝ հազար: (Գրքին նայելով) Նշանն է ճշգրիտ: (Մօտենալով պատին փռած մի ճերմակ փալասի) Ահաւասիկ եւ գրեմ, դրոշմեմ ի լուր աշխարհի: (Մատը կոխելով իր թանաքամանի մէջ գրում է փալասի վրայ: Կարդում է)

Անյաղթ Նազար, քաջն Նազար,
Մին կզարկի, ջարդի հազար:

(Փալասը ցոյց տալով օդի մէջ) Նշան աստուածային, բան խորախորհուրդ, դրօշ երկնապարգեւ, գիր զարհուրելի: Որով եւ յոյս աստուած՝ կտիրես աշխարհին) (Փալասը կապում է Նազարի նիզակին եւ մեկնում Նա-